№ 60 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 16

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 16 № 60

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12	ամսվայ համար	„	„		10 ր.
11	„	„	„	„	„
10	„	„	„	„	9 ր.
9	„	„	„	„	8 ր.
8	„	„	„	„	7 ր.
7	„	„	„	„	6 ր.
6	„	„	„	„	„
Մնացած ամիսները ամսական					մէկ րուբլի
Ամերիկա տարեկան			„		6 դոլլար
Եւրոպա		„	„		30 ֆրանկ
Պարսկաստան		„	„		10 րուբլի

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՒ ԿՈՄԻՍԻՕՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Առաջարկում է իր ծառայութիւնները դրամագլուխներ հայթայթելու համար արդիւնաբերական և լեռնային ձեռնարկութիւնների գրաւականով։ Իր հաշւով հետազօտել է տալիս իրան առաջարկված իւրաքանչիւր լուրջ գործ։

Հասցէն՝ Banque Denis et C-ie, 33, rue Le Peletier, Парижъ.
(օ. մ.) 10—8

Օգտվեցէք ԴԻՊՔԻՑ

Գործի տեսակէտից անհրաժեշտ պէտք զգալով Թիֆլիսում մեր նոր սկսած ամենապահով ու շահաւէտ գործարանը մեծացնելու, մենք պէտք ունենք մի խելահաս և դրամ ունեցող ընկերի։ Ամեն մի ազնիւ, անկեղծ մարդ, որ իր դրամով ուզում է գեղեցիկ արդիւնք և ապագայ ստանալ—թող բարեհաճի գալ մեզ մօտ և ծանօթանալ գործի ու պայմանների հետ և նոյնպէս համոզվել մեր ասածների ճշմարտութեանը։

Հասցէ. Механическое столярно-плотничное заведеніе „ПРОГРЕССЪ", уголъ Велико-Княжеской и Семеновской.
(կ. հ.) տ. 2—1

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ կիրակի, մարտի 16-ին, առաւօտեան ժամը 11-ին, նշանակված է աճուրդ՝ դպրոցապատկան քարվանսարայի վերին յարկի կրպակները կապալով տալու համար։ (Սիօնի փող. №13)։
(12, 16) (տ.) 2—2

Մարտի 16, կիրակի օրից
◆ ԲԱՑ Է ◆
նկարիչ ԱՐՇԱԿ ՓԷԹՎԱՃԵԱՆԻ
ԶՈՒՏ
ԱԿՎԱՐԷԼՆԵՐԻ
Ցուցահանդէսը

Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.
Բարեատինսկայա փողոց.
Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։
Մուտքը արժէ 30 կոպէկ։
Աշակերտները և զինւորները վճարում են կէսը։
(օ. մ.) տ. 20—2

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Մենք հաղորդել էինք, որ Էջմիածնի տաճարի խախտված մասերը վերանորոգելու և առհասարակ տաճարը բարեզարդելու համար Ա. Մանթաշեանը յատկացրել է 40,000 րուբլի։

Այդ գործը գլուխ բերելու համար Էջմիածնում կազմվել է տեղապահի նախագահութեամբ մի յատուկ յանձնաժողով, որի անդամներն են Յուսիկ, Մեսրոպ, Բաբգէն և Կոմիտաս վարդապետները։ Յանձնաժողովը իր կողմից պէտք է հրաւիրէ ճարտարապետների և նկարիչների՝ խորհրդակցելու վերանորոգութեան վերաբերեալ գործերի մասին։

Ինչպէս յայտնի է, Էջմիածնի տաճարը մի քանի անգամ ենթարկվել է վերանորոգութիւնների, և պէտք է խոստովանել, որ դժբաղդաբար այդ վերանորոգութիւնները եղել են վատ ծրագրված, վատ մշակված, բոլորովին անճաշակ։

Անշուշտ պէտք է պահանջ դնել, որ գոնէ այս անգամ վերանորոգութեան խնդրի մշակութիւնը յանձնված լինի հեղինակաւոր մարդկանց, և նորից ականատես չը լինենք այն խայտառակութեան, թէ ինչպէս մի հոյակապ շէնք, որ պէտք է գեղարուեստական ակնածութեան և պատկառանքի առարկայ լինէր, ընդհակառակը ծնեցնում է ծանր և անախորժ զգացմունք իր անճաշակ նորոգութիւններով։

Ուշադիր վերաբերվելով դէպի գործը՝ մեր ճարտարապետները և նկարիչները կարող էին գեղեցիկ գեղարուեստական գործեր կատարել։ Թէ հին շէնքերը վերանորոգելու և թէ հայկական ոճով նորերը կառուցանելու համար ամբարվել են և տարէ-տարի ամբարվում են ուսանելի յուշումներ, որոնցից պէտք է օգտվել խելացի և հմուտ կերպով։ Օրինակ՝ Սուրէնեան և Փէթվաճեան նկարիչները, ճարտարապետ Թորամանեանը և ուրիշները հաւաքել են հայկական ոճի վերաբերութեամբ բազմատեսակ հետաքրքրական նիւթեր, որոնցից կարելի է և պէտք է օգտվել հները նորոգելու և նորերը կառուցանելու համար։

Գեղարուեստական և ճարտարապետական պահանջները, պէտք է խոստովանել, մինչև այժմ մոռացութեան են եղել մատնված մեզանում։ Որոշ ստիլի կամ ոճի պահպանութեան խնդիրը դեռ նոր-նոր է ժողովրդականութիւն ստանում, և մենք տեսնում ենք, որ մեր օրով բազմաթիւ նորոգութիւններ և նոր շէնքերի կառուցումներ կատարվում են գեղարուեստական տեսակէտից անփոյթ կերպով։

Որպէսզի Էջմիածնի յանձնաժողովը չը կրկնէ նախկինների սխալները, պէտք է նախօրօք հոգատար լինի մշակելու իր առաջ դրված խնդիրները ձեռնհաս և հեղինակաւոր անձերի միջոցով։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 15 մարտի

Ի լրումն Կովկասի Փոխարքային ուղարկված 600,000 րուբլու, ներքին գործերի մինիստրութիւնը նորից 500 հազար րուբլի է փոխադրել՝ Անդրկովկասի անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեան ուտելիքի և սերմացուի համար։

—

Երէկ ստացանք հետևեալ հեռագիրը.

Դալմահմէդլի, 15 մարտի

Արէշի գաւառի Քեանդակգիւղում կարիքը շատ մեծ է։ Ազգաբնակութիւնը ծախել է իր վերջին ունեցած-չունեցածը։ Դրութիւնը ցաւալի է։ Շուտով գուցէ սովամահի դէպքեր տեղի ունենան։ Գիւղում բուն են դրել զանազան վարակիչ հիւանդութիւններ։ Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն, ինչպէս և կառավարական փոխատուութիւն։ Աղերսում ենք, աջակցեցէք։

Քէոսեան

—

Թիֆլիս, 15 մարտի

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում որոշեց՝ խնդրել քաղաքային վարչութեանը լիակատար կազմով ներկայանալ և շնորհաւորել Կովկասի Փոխարքայի յոբելեանը։ Պատգամաւորութեան մէջ, բացի քաղաքագլխից և վարչութեան անդամներից, կը լինեն նաև ձայնաւորներից մի քանիսը։

Միաժամանակ դուման որոշեց Կովկասեան ապագայ պօլիտեխնիկումում հաստատել մի քանի թոշակաւորներ՝ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվի անունով և քաղաքային դպրոցներից մէկը անուանել Վօրօնցօվեան անունով։

—

Կահիրէի հայ ինտելիգենցիայի առաջաւոր անձինք վերջերս մի մասնախումբ են կազմել և հրաւիրել են տեղական հայերին մի մեծ միտինգի՝ ի յիշատակ Արփիար Արփիարեանի։

Միտինգը կայացել է մարտի 1-ին, Կահիրէի ս. Աստուածածին եկեղեցում։ Միտինգին նախագահել է եգիպտահայերի առաջնորդ Մկրտիչ ծ. վ. Աղաւնունին։ Բանախօսել են դոկտ. Ն. Տաղաւարեան, Գ. Պէօշիւքեան և Միհրան Տամատեան, որը յատկապէս այդ միտինգի համար Կահիրէ էր գնացել Ալէքսանդրիայից։

—

Վիէննա, 15 մարտի

«Նոր. Բիւրօ» հաղորդում է, որ իշխան Բիւլօվը կիրակի օրը Վիէննա կը գայ բարօն Էրենտալին այցելելու համար։

«Նոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պօլսից. «Բ. Դուռը մարտի 13-ին հաղորդեց Հռոմ, որ համաձայն է մակեդօնական ժանդարմէրիայի պետի պաշտօնում Ռօբիլանտին տեսնել։ Նոյն հաղորդագրութիւնը կուղարկվի պայմանագիր պետութիւնների դեսպանատներին»։

—

Պետերբուրգ, 15 մարտի

Բարձրագոյն հաստատութիւն գտաւ մինիստրների խորհրդի այն որոշումը, որի համաձայն Կովկասի մահմեդականների դասային իրաւունքների գործերի քննութիւնը արդարադատութեան մինիստրութիւնից անցնում է Կովկասի Փոխարքային։

—

Օդեսսա, 15 մարտի

Ժուկօվսկի փողոցում, դեղատան ապրանքների պահեստում ոստիկանութիւնը գտաւ ռումբեր, հրացաններ և փամփուշտներ։ Ձերբակալված են պահեստի կառավարիչը և ծառայողներից մէկը։

—

Պետերբուրգ.—Պետական Դումայի չափաւոր աջակողմեանները Կովկասի մասին փոխանակ հարցապնդում անելու՝ վճռել են արշաւանք սկսել Կովկասի Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվի դէմ։

Երկուշաբթի օրվանից Պետական Դումայի ընդհանուր ժողովում մտադրութիւն կայ ձեռնարկել նախահաշւի քննութեան։

Սօցիալ-դեմօկրատների ֆրակցիան անհնար գտաւ մասնաւոր խորհրդակցութիւն կազմել Պետական Դումայի նախահաշիւը քննելու համար։

Կրկին լուրեր են պտտում, որ մօտիկ ապագայում ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Շաուֆուսը պաշտօնազուրկ է լինելու և նրա տեղ նշանակվելու է գեն. ֆօն-Վինդրիխը։

(«Б.»)

—

Պետերբուրգ, 14 մարտի

Նօվօսիվկօվսկի փողոցում, այն տեղում, ուր գլխաւորապէս ապրում է բանւոր դասը, գիշերով հրդեհ ծագեց։ Այրվեցին 7 հոգի. աւելի կամ պակաս խանձուածքներ ստացան 20 մարդ։

—

Պետերբուրգ, 3 մարտի

Գալիք շաբաթ Պետական Դումայում մինիստրների խորհրդի նախագահ Ստօլիպինը պատասխան կը տայ աջակողմեան պատգամաւորներին ֆինլանդական գործերի վերաբերութեամբ։ Պրեմիէրից սպասվող ճառին պետական խոշոր նշանակութիւն են տալիս։

Միտրօպօլիտ Անտօնին յայտնեց, որ Պետերբուրգի հոգևոր ակադեմիայի ռեկտօրը ընտրվելու է ակադեմիայի պրօֆէսօրների խորհրդից, և ոչ թէ նշանակվելու է սինօդից։

Զարմանալին այն է, որ Կիէվի հոգևոր ճեմարանի ռեկտօրը, որ երկու անգամ ընտրվեց ճեմարանի պրօֆէսօրների խորհրդից, չը հաստատվեց, իսկ նրա տեղ սինօդը նշանակեց մի ուրիշ անձի։

Եկատէրինօսլավում տարածված անօնիմ թռուցիկներով ազդարարվում է, որ երկրորդ Պետական Դումայի սպանված անդամի վրէժը սպառնում է բոլոր կրամօլնիկներին և «չըհուդներին հովանաւորողներին»։ («Кс.»)

—

Վիէննա, 15 մարտի

«Նոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պօլսից, որ սերբիական սանջակի կիրճերից մէկում, մարտի 8-ին, յարձակում է տեղի ունեցել ուժ գինւորների և երկու ժանդարմների վրա, որոնք ուղեկցելիս են եղել Մելնիկի շուկայից վերադարձող բօլգարական գիւղացիներին։

Զինւորները և ժանդարմները սպանված են, գիւղացիները անվնաս են։

Թիւրքաց իշխանութիւնների տեղեկութիւնների համաձայն, յարձակումը կատարել է հրոսակախմբերի յայտնի պարագլուխ Սանդանսկին, որի հրամանով սպանվեցին Սարաֆօվը և Գարվանօվը, և ուղղված է եղել բացառապէս գինւորների և ժանդարմների դէմ։

Կասկածով ձերբակալված են բօլգարական հարևան գիւղերից 8 գիւղացիներ։

—

Լօնդօն, 15 մարտի

Ռէյտէրին Սիդնէյից հեռագրում են. «Սիգիզմունդ» լրագիրը հաղորդում է, որ (?) կղզիներում վայրենիները սպանել և կերել են չորս տեղացիների, որոնք գնացած են եղել մթերքներ գնելու։ Գերմանական Նոր-Գվինէայից զօրք է ուղարկված մարդասպաններին պատժելու համար։ («Հ. Գ.»)

—

Պետութիւնները և մակեդօնական ռեֆօրմները

«Frank. Zeit.» լրագրի Սօֆիայի թղթակիցը ծանօթացնում է անգլիական առաջարկութեան մի քանի առանձին կէտերի հետ մակեդօնական ռէֆօրմների վերաբերմամբ։

1) Պետութիւնները տալիս են իրանց համաձայնութիւնը, որ որոշեալ ժամանակամիջոցի համար գեներալ-նահանգապետ նշանակվի, որը չէ կարող պաշտօնանկ լինել առանց նրանց համաձայնութեան։

2) Ժանդարմէրիան պէտք է լրացվի եւրօպական օֆիցէրներով։ Նրա պարտաւորութիւնն է բացառապէս կռիւ մղել չէտաների դէմ։

3) Քաղաքացիական գործակալները թիւրքաց ծառայութեան մէջ են հաշվում և ընդհանուր-նահանգապետի անմիջական խորհրդականներն են։

4) Թիւրքաց զօրքերը Մակեդօնիայում փոխարինվում են ժանդարմէրիայով։

Այդ պայմաններում մեծ պետութիւնները ապահովում են սուլթանին Մակեդօնիայի անձեռնմխելիութիւնը։

Նոյն թղթակցի խօսքով, Ռուսաստանը պատրաստ է միանալ անգլիական առաջարկութեանը, բայց հետևեալ ուղղումն է անում. ընդհանուր-նահանգապետի փոխարէն նա առաջարկում է նշանակել եւրօպական խառն կօնտրօլային յանձնաժողով։

Անգլիական առաջարկութեան ընդունվելը Ռուսաստանի կողմից համանիշ է միւրցշտէգեան համաձայնութեան վերջանալուն,—աւելացնում է լրագիրը։

—

Գանձակ, 14 մարտի

Այսօր, գիմնազիայի 6-րդ դաս. աշակերտ Պօղոս Մանուչարեանը, դասարանի մէջ անմեղ վիրաւորեց իր համադասարանցի Մովսէս Մատինեանին ֆինական դանակով. վէրքը հասցրած է ուղիղ սրտին։ Ինչպէս կարողացայ իմանալ, դէպքը պատահել է այսպէս. օրը վատ լինելու պատճառով, աշակերտները պարելիս են եղել եւրօպական և ասիական պարեր, իսկ Մատինեանը և Մանուչարեանը սկսում են մենամարտական փորձեր անել ֆինական դանակներով, և այդ ժամանակ Մանուչարեանը հասցնում է Մատինեանին ծանր վէրք, որից և Մատինեանը, առանց ուշքի գալու, 3 րօպէից յետոյ վախճանվեց։ Հարցաքննութիւնից յետոյ Մանուչարեանը ազատ է արձակված։

Ամսիս 12-ին Վօյնիլօվիչը հասցրած վէրքից վախճանվեց։

Կողմնակի

—

Մերվ, 10 մարտի

Այստեղ են եկել Մատթէոս վարդապետը և պ. Կ. Խատիսեան՝ դրամ հանգանակելու յօգուտ Բագուի հայոց կուլտուրական միութեան։ Մարտի 9-ին Մատթէոս վարդապետը քարոզ խօսեց եկեղեցում և գրուատեց կուլտուրական միութեան գործունէութիւնը և մինչև անգամ այնքան յափշտակվեց, որ թոյլ տուեց իրան անճիշտ տեղեկութիւններ հաղորդել, վերագրելով կուլտուրական միութեանը այն գործը, որ կատարել է Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը, այն է՝ Անդրկովկասի ժողովրդին հացի և սերմացուի համար մօտ 2 միլիոն փոխատուութեան գործը։

X

Ծանօթ. խմբ.—Տպելով այս լուրը, մեզ զարմացնում է թէ Մատթէոս վարդապետի և թէ պ. Խատիսեանի վարմունքը։ Կուլտուրական միութիւնը, ինչպէս յայտնի է, ոչ մի դեր չէ խաղացել հայ ժողովրդին օգնելու գործում, փոխատուութեան վերաբերմամբ, այլ այդ գործի ամբողջ նախաձեռնութիւնը, աջողեցումը պատկանում է Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովին և մասնաւորապէս «Մշակին» մօտ կանգնած անձանց մի խմբի։ Նոյն անտեղի ինքնագովութիւնը պ. Խատիսեանը թոյլ էր տուել իրան անելու և Բագուի իր թերթում։ Մենք ոչինչ ընդդէմ չունենք, որ հայ ժողովուրդը օգնէ կուլտուրական միութեան, բայց թոյլ չենք տայ նոյնպէս, որ մէկի կատարած գործը անարդարութեամբ վերագրվի մի ուրիշին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՃԵՄԱՐԱՆՆ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԸ

Երբ կեանքն սկսաւ ինձ համար գոյն առնել, կերպարանափոխվել և իմաստ ստանալ, ես ինձ գտայ ազգասիրական եռանդով դէպի առաջ ձգտելու ժամանակաշրջանում։

Ամենայն հասակ այդ ժամանակ, առանց դասակարգային ինչ և իցէ խտրութեան, բորբոքված էր միևնոյն ազգասիրական ձգտումներով, և ամենայն ձեռք, որ ունէր կարողութիւն, գուն էր գործում մի քար բերել ազգային շէնքի մէջ դնելու համար։

Գէորգ Դ.-ի շրջանումն էինք և ճեմարանն արդէն կանգնած կար, որ խորհուրդ ունէր կովկասեան հայութեան փարոսը լինելու, և գործի էր մտել Այվազեան Գաբրիէլ արքեպիսկոպոսի ղեկավարութեամբ։

Խորհուրդը Մատթէոս կաթողիկոսինն էր. գործադրութիւնը Գէորգինն եղաւ։

Աշտարակեցին—ընդհանրապէս համբաւաւոր—ի մասնաւորի իր անունը անեղծելի կնքել էր Ներսիսեան ուսումնարանի, Ներսիսեան լճի և Ներսիսեան անտառի վրա։

Մատթէոս մրցել էր նրա յիշատակի հետ ազգային ժողովրդական դպրոցներովը։

Գէորգը գեղեցիկ նախանձաւորութեամբ հիմնեց ճեմարանը և նոր զարկ տուեց դպրոցներին։ Բայց, աւաղ, սա վերջը նախանձաւորութիւնը նախանձի փոխեց, որ և ժառանգութիւն մնաց յաջորդներին։ Երբ նրա ականջի տակ թմբկահարում էին Ներսէսի գովքը. «Է՜հ, Ներսէս ինչ բրաւ—պատասխանում էր՝ ափիբերանելու համար գովողին—մի լիճ մը շինեց, ես ճեմարանը հիմնեցի»։

Մեծագործութեանը վիճակված էր այդտեղ կանգ առնել. մի քանի տասնեակ տարով էր չափված նրա ընթացքը.—երբ կաթողիկոս՝ և Ներսիսեան ուսումնարանից մինչև Գէորգեան ճեմարանը։ Այնուհետև նախանձն և ոխը յաջորդներին խանձեցին. մեծակերտութիւնը դադար առաւ։

Մի օր, Մակարի կաթողիկոսութեան տարիներում, այդ ժամանակի ազդեցիկ եպիսկոպոսներից մէկը, ինքը սինոդի անդամ, Թիֆլիս էր եկել առողջութիւնը կազդուրելու համար: Դա Գէորգի յիշատակը նզովողներից մէկն էր, որին նա Ղազարապատի ներքնասենեակներում, ասում են, չոր հացի ու ջրի ապաշխարանքին էր նստեցրել մինչև որ նա հատուցանէր Մայր Աթոռին Թիֆլիսի կալուածներից գրպանած տասնեակ աւելի հազարները:

Ուսումնարանները ընկած վիճակի մէջ էին, ճեմարանն էլ իր ներքին յուզումներով կարծես Էջմիածնի խաղաղիկ քունը խանգարող մի չար ոգի էր դարձել:

— Ձերդ սրբազնութիւն—ասել էր մէկն այդ եպիսկոպոսին, երբ սա ճաշից յետ առանձնացած՝ առաջնորդարանի սենեակներից մէկում, կակուղ բազկաթոռի վրա բազմել էր հանգիստ առնելու,—Էջմիածինը գրասէր և մինչև իսկ ժառանգաւոր հոգևորականներ էր տալիս իր ժառանգաւորաց դպրոցից. իսկ այժմ ինչացու է ճեմարանը, որից ոչ հաւատացեալներ և ոչ էլ գոնէ գրաբարագէտներ են դուրս գալիս, որ գոնէ՝ եթէ իրանց շահի համար իսկ մի օր հոգևոր կոչման մէջ մտնեն՝ կարողանան սուրբ գիրքը և սուրբ հայրերի ճառերը ժողովրդի առջև բանալ: Կա՞յ մէկը, որ այնքան գրասէր լինի, որպէս, օրինակ, ձեր սրբազնութիւնը*):

— Իսկն էլ այդ է—պատասխանել էր եպիսկոպոսը խօսակցին—իսկն էլ այդ է. հոգևորականութեան համար ճեմարանն անպէտք է, Էջմիածնի համար էլ ծանր բեռ. մենք ճեմարանը պահել չենք ուզում. վեհափառ կաթողիկոսն էլ այդ մտքին է. միայն նա քաշւում է ժողովրդից, թէ սա հիմա կասէ՝ Գէորգի դէմ ոխ ունենալու պատճառով արաւ նա այդ բանը:

Իսկ ճեմարանի գործերը երթալով վատից վատթարը գնացին. և երկու կաթողիկոսութիւններ նրա վրայով անցան իբրև խորշակ:

Չը գիտեմ ինչ բանի վրա հիմնուած ոմանք շարունակ և ամեն տեղ նոյնն են կրկնում թէ ճեմարանն ունի Գէորգից յետ մնացած 300 հազար րուբլի փող:

Հինաւուրց մի համբաւ:

Գոնէ մի անգամ էլ Էջմիածինն ասէր, թէ ճշմարիտ է, ճեմարանը Գէորգ կաթողիկոսից ժառանգութիւն ունի 300 հազար րուբլի փող:

Էջմիածինն ոչ միայն այդ գումարը չունի ճեմարանի անունով Գէորգից մնացած, այլ և Էջմիածինը, վերջին կաթողիկոսութեան ժամանակ, քանդելով իր տնտեսական դրութիւնն ու աւանդական կենցաղը, փակեց բոլորովին իր դուռը ճեմարանի դիմաց, որին նա իր նահապետական համազգային սեղանից ու գանձից տալիս էր [illegible] և ամենայն՝ որ ինչ պէտք էր:

Եւ այսպէս, Էջմիածնի տուածը ամենայն [illegible] կարելի է ասել հնգապատիկ աւելի [illegible] յիշեալ գումարի—եթէ դա գոյութիւն ունենար—տոկոսիքը:

Ճեմարանն, այո, ունի մի գումար, յատկապէս նրա անունով գումարներում արձանագրուած. և այդ գումարը հասնում է իբր մի 150 հազարի, սրանից-նրանից կըտակուած ու նուիրուած ճեմարանին՝ այս ու այն նպատակով: Յատուկ գումարներ:

Այդպէս ուրեմն, ճեմարանը պահվել է Էջմիածնի արդիւնքով և նրա տարեկան ծախքը կարող էք հնգապատիկ աւելի հաշւել քան այն երևակայական 300 հազարի տարեկան տոկոսիքը, մինչև իսկ 5% ընդունելով:

Յետոյ մտածեցէք, թէ կարո՞ղ է ճեմարանը պահվել առանց Էջմիածնի արդիւնքի:

Այնուհետև մտածենք մեր անելիքը, թէ ինչ միջոցներ ձեռք առնենք, որ աւերող ձեռքեր Էջմիածինը չը քանդեն մի սոսկալի տնտեսավարութեամբ և չը փակեն դռները ճեմարանի վրա:

Էջմիածինն ազգինն է և նրա բոլոր կալուածներն ու բոլոր վանքերը իրանց ունեցած-չունեցածով ազգինն են: Եւ երբ մի օր, մի արեւահոտ օր, ազգը իբրև մի միտք, մի մարմին կանգնեց հասած վտանգի դէմ,—ուր իբրև մի շապիկ ուզեցին չորթել իր վրայից կալուածները,—ապա ինչո՞ւ նա այժմ անփոյթ, անտարբեր նստի մի ներքին քայքայման և աւերման հանդէպ. մանաւանդ երբ աւերիչը [illegible] ու մինչև իսկ ամբարիշտ համարձակութեամբ իր մտքում ասում է, որպէս երբեմն յիշեալ եպիսկոպոսը հոգևոր բարձր ատեանում, որտեղ ցոյց էր տրված նրան աւերչութիւնը, ասում էր ոչ թէ մտքում՝ այլ բոլորովին բարձրաձայն.—Քեզ ի՞նչ, մերը չէ՞:

Ա. Մ. Եղեկեան

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

[illegible] դաժան ռեժիմի ժամանակ՝ երբ մեզ կատարելապէս կաշկանդում էին—բռնաւորել անել հասարակական ոյժերով կուլտուրական աշխատանքներ կատարելու միջոցները և երբ այդ ռեժիմը ի կատար ածելու համար փակվեցին բոլոր համարեա մեր կուլտուրական միութիւնները,—հրատարակչական, բարեգործական և այլ ընկերութիւնները,—մեր առողջ գաւառացի թիֆլիսաբնակ և բաքուաբնակ երիտասարդները իրանց ծննդավայրերին օգնութեան հասնելու համար, իւրաքանչիւր գաւառ, առանձին-առանձին հիմնեցին այսպէս ասած землячества, որոնք հաւաքելով իւրայինների մէջ ամսական տուրքի ձևով որոշ գումարներ՝ աշխատում էին լրացնել իրանց գաւառի պէտքերը: Սակայն այս ձևով օգնութիւնը չէր կարող յարատև և մշտական կերպարանք ստանալ, որովհետև թէ կազմակերպութեան ձևը և թէ օգնութեան եղանակը առանց սիստեմի էր, առանց կանոնների և կանոնաւոր հաշւետուութեան, ուստի և շատ բնական էր սպասել, որ այդպիսիք շուտով դադարեցնէին իրանց գործունէութիւնը:

Այժմ, երբ արդէն վերականգնվեց Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը իր լայնածաւալ կանոնադրութեամբ, երբ ամեն մի գաւառակի հնարաւորութիւն է տրվում բանալ ճիւղեր—բաւական է որ իրանք ցանկանան—հէնց այժմ արդէն բացվում է լայն ասպարէզ իւրաքանչիւր գաւառում շուտով բանալու ճիւղեր և՝ ձեռք ձեռքի տուած տեղացի ինտելիգենտ ոյժերին և կենտրոններ տեղափոխված գաւառացի երիտասարդներին՝ ամենին գրվելու իրանց գաւառի ճիւղերում անդամ և հնարաւորութիւն տալ այդպիսով գոհացնել գաւառի բազմաթիւ կուլտուրական պահանջները. իսկ վերջերս կենտրոններում գործող землячества-ները արդէն կանոնաւոր հողի վրա կը դրվեն, կենտրոնից հեռացած երիտասարդները բարոյապէս կապված կը լինեն իրանց ծննդավայրերի հետ, կը հետաքրքրվեն այնտեղի հասարակական գործերով և միևնոյն ժամանակ նիւթապէս օգնած կը լինեն մեր աղքատացած և յետամնաց գաւառին:

Հրաւիրում ենք կենտրոններում ապրող գաւառացի երիտասարդներին այս հանգամանքի վրա ուշադրութիւն դարձնել, և եթէ մինչև այժմ իրանց համաքաղաքացիները չեն շտապել Կովկասի հայոց բարեգ. ընկ. ճիւղեր բանալ, իրանք նախաձեռնեն այս գործը և զարկ տան գաւառի վերակենդանացմանը:

Ժամանակ է խաղաղ և հաստատուն կուլտուրական գործունէութեան:

Շիրին

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

V

32 ծառայողներ փողոց նետելուց յետոյ, Բագուի քաղաքային ինքնավարութիւնը սրտացաւութեան մի ուրիշ նոր օրինակ է տալիս քաղաքի շահերը պաշտպանելու գործում:

Ուշադրութեան արժանի օրինակ: Ազգաբնակութեան ամենահրատապ կարիքը այսօր առողջարար ջուր ունենալն է:

Քաղաքի վարիչների հոգածութեամբ մատակարարվող Զուգուլըի և քաղաքային օպըէնխիւելի ջուրը անբաւարար է, թերևս և վատառողջ, և ահա ազգաբնակութիւնը գերադասում է գործ ածել Կուրի ջուրը, որ բոլորովին կողմնակի մի մարդ բերում է քաղաք նաւով, մաքրված ու զտված:

Այդ ջուրը իր համար հետզհետէ շուկայ է նուաճում:

Մ. Մ. Սարուխանեան, խրախուսված իր այդ ձեռնարկի աջողութեամբ, ջրի մատակարարութեան գործը դիւրացնելու նպատակով համապատասխան քայլեր է անում, բայց, հանդիպելով դժուարութիւնների և խորհրդաւոր անտարբերութեան, որոշում է քաղաքապատկան հողի վրա խողովակներ կապել:

Սակայն քաղաքի վարիչները ոչ միայն հրաժարվում են խրախուսել այդ ձեռնարկը, այլև մերժում են Սարուխանեանի առաջարկը, այն պատճառաբանութեամբ՝ թէ դա կարող է վնասել քաղաքի նիւթական շահերին և ստեղծել մի շարք անախորժութիւններ:

Ներկայ դէպքում ևս քաղաքի վարիչները մնում են հաւատարիմ իրանց սկզբունքներին:

Վճռված է տնտեսել ֆինանսները, պէտք է տնտեսել և անխտիր միջոցներով պաշտպանել քաղաքի շահերը:

Ուրեմն թող քաղաքացիները բաւականանան վատառողջ ջրով. թող ազգաբնակութեան մէջ դրա շնորհիւ զարգանան տարափոխիկ հիւանդութիւնները, աւելանան մահացութեան դէպքերը…

Միայն թէ քաղաքը չը տուժի, տուգանք չը վճարի ջրի կապալառուին…

Քաղաքի շահերի ըմբռնողութեան և պաշտպանութեան գործում մենք տեսնում ենք դարձեալ միևնոյն երևոյթը.—մարդիկ փողի համար…

Քաղաքացիների կեանքն ու առողջութիւնը զոհաբերվում է դրամական խնայողութեան:

Շահ ասելով պէտք է հասկանալ փող:

Այդ էլ միջավայրի բնորոշ հասկացողութիւնն է:

Սակայն ներկայ դէպքը ուշագրաւ է ոչ միայն շահերի ըմբռնողութեան ու պաշտպանելու տեսակէտից, այլև այն տեսակէտից, որ խորհրդաւոր հանելուկ է պարունակում իր մէջ:

Սարուխանեանը, ինչպէս խօսում և գրում են թերթերը, մերժումն է ստացել, որովհետև մրցակիցներ ունի քաղաքի վարիչների ազդեցիկ շրջանում:

Եւ այդ բոլորի իսկական պատճառը 20,000 րուբլիանոց լորդ-մէրը անկարող եղաւ նկատել…

Իսկ տեղական «ազատամիտ» երկու թերթեր աշխատում էին իմաստութիւն որոնել լորդ-մէրի այդչափ սրտացաւութեան մէջ և ծափահարել նրա տարօրինակ պաշտպանութիւնը իբր թէ քաղաքի շահերի…

VI

Սկսեցի հանելուկներից, սակայն հանելուկները վերջ չունեն:

Անշուշտ ընթերցողները ուշադրութիւն դարձրին այն բնորոշ կարգադրութեան վրա, որ մօտ ժամանակներս արել էր այստեղի գիմնազիայի դիրեկտորը՝ Բագուի [illegible] առաջին եպիսկոպոս առաջնորդի քարոզը լսելու համար բաժանելով աշակերտներին արժանաւորների և անարժանների, ուրիշ խօսքով՝ ոչխարների և այծերի:

Ժողովրդին ոչխարների ու այծերի բաժանելու քաղաքականութիւնը նորութիւն չէ, ի հարկէ: Սակայն նորութիւն է տեսնել, որ այդպիսի մի քաղաքականութիւն մուտք է գործում դպրոցական աշխարհ և իր մանկավարժական սիստեմի մէջ:

Անշուշտ այդ կարգադրութիւնը պատճառաբանվում է հանելուկային մեթոդով, որը անմատչելի է մեր ըմբռնումներին:

Ուստի հանելուկի լուծումն էլ վերապահվում է իրան հեղինակին:

Ես, գոնէ, դժուարանում եմ:

—

Բարեկենդանի օրեր են:

Սազանդարները առատ հունձ են ունենում, բայց և այնպէս դարձեալ դժգոհ են:

Դժգոհ են՝ թէ ինչո՞ւ հարսանիք հրաւիրվածները տուզեր ու կառավարիչներ չեն, որպէսզի աւելի առատ հունձ ունենան հարսանիքների այս կարճատև սեզոնում…

Զինադադար է. գնդակների սուլոցը թէև լռված է երբեմն, բայց այլևս այնչափ զոհեր չէ խլում, ինչպէս մի ամիս առաջ:

Եւ մարդիկ սրտապնդված դիմաւորում են բարեկենդանը հրաւէրներով ու հարսանիքներով, թէև դրանցից շատերն էլ կատարվում են իսկ և իսկ «բուկլի վերխ»-ի սիստեմով:

Իսկ ինչպէս գիտէք, մեր իրականութեան մէջ «բուկլի վերխ»-ի սիստեմը քաղաքացիութեան իրաւունք է վայելում:

Ունևորի հետ հաւասար, իր օրվայ վաստակով ապրող արհեստաւորը, կամ ամսական սուղ ռոճիկով իր գոյութիւնը քաշ տուող գործակատարը, հարիւրներ է ծախսում հարսանիքի համար, իսկ յաջորդ օրը զարթնում է հարբեցողութիւնից զգաստացածի նման:

Բուրժուաների շռայլութիւնը դատափետող աղքատութիւնը փառասիրապէս ձըգտում է քայլել բուրժուայի շաւղով, ընդօրինակելով նրա կարգերն ու սովորութիւնները…

Կառետան մօդա է այսօր մինչև իսկ ցնցոտիապատ ծնողների զաւակի համար, թէև վերջինս նրա մէջ նստելու ձևն էլ չը գիտէ:

Եւ ահա մի շարք կուրիօզներ: Իսկ կուրիօզների հետ զուգընթացաբար շատ անգամ անպատուաբեր օրինակներ:

Ահա մէկը այդպիսի օրինակներից:

Մի հարսանիքատէր հրաւիրում է հիւրեր. հարսանիքը սկսվում է, նստում են խնջոյքի, և ահա տանտէրը ոտքի է կանգնում «կենաց» բաժակը ձեռքին և դիմում հիւրերին.

— Ես պատրաստութիւնս տեսել եմ 100 հոգու համար, մինչդեռ եկել են կրկնակի: Այդքանին հիւրասիրելը իմ ոյժից վեր է… Այժմ ի՞նչ էք ասում. վերցնո՞ւմ էք ձեր վրա ծախսերի կէսը…

Հիւրերից ոմանք՝ վիրաւորված զգալով իրանց՝ թողնում-հեռանում են:

Իսկ երբ սկսվում է նորապսակների շնորհաւորութեան տեսարանը, թագնվում են անկիւններում և կամ հեռանում են նրանք ևս, որոնք մատուցարանի վրա դնելու ոչ մի նուէր չունեն…

Ահա այդ տեսակ հարսանիքների սեզոնն է սկսված այստեղ:

Այս փոքր աշխարհում, ինչպէս տեսնում էք, հարսանիքներն էլ բռնված են փող վաստակելու տենդով:

Անսպառ հանելուկները Բագուի մթնոլորտում վերջանում են կամ կուրիօզներով և կամ ցինիկ պարզութեամբ, որի առաջ դալկանում է վայելչութեան և համեստութեան գաղափարը:

Սակայն Բագուն փող է սիրում. գաղափարը կարո՞ղ է փող դառնալ:

Աշխատակից

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

—

Հայոց կաթողիկոսի թափուր մնացած գահը միշտ հետաքրքրել է ոչ միայն հայ ժողովրդին, այլ և մեր երկրին տիրող իշխանութիւններին: Որքան էլ մեր թշնամիները հայերին նսեմացնել ցանկանան, բայց պատմական իրողութիւն է, որ Մերձակայ Արևելքին վերաբերեալ քաղաքական խնդիրների մէջ հայ ցեղը միշտ որոշ դեր է կատարել և մինչև այսօր էլ կատարում է: Նոյնիսկ պոլօժենիայով սաստիկ կաշկանդված կաթողիկոսը այսօր էլ իբրև հայ ազգի անհամար բազմութեան աչքում դեռ ամենևին չէ կորցրել իր հեղինակութիւնը, որպէս փառաւոր կերպով ապացուցեցին մի քանի տարի սրանից առաջ մեր երկրում տեղի ունեցած ժողովրդական շարժումները: Նա լոկ կրօնապետ չէ, որպէս Թուրքերի մուշթայիդը և հրեաների քահանայապետը: Շատ բնական է այս պատճառով, որ նոյնիսկ մեր յեղափոխական կուսակցութիւնների օրգանները անգամ անտարբեր չեն այս հարցում, թէև քարոզում են, որ նրանք եկեղեցու հետ գործ չունեն: Սակայն ամեն օր թէ արտասահմանի և թէ մեր երկրում հրատարակվող իրանց թերթերում այդ մարդիկ սկսել են գրել, մանաւանդ արշաւանք են սկսել իրանց համար անհաճելի հոգևորականների դէմ: Սակայն ամեն մի գրիչ ձեռք առնող մարդ պարտական է հասարակութեան առաջ դուրս գալ նախ անկեղծ արդարամտութեամբ և երկրորդ անհերքելի փաստերով: Վաղուց յայտնի է, որ հայոց կաթողիկոսները թէև ձևականապէս միշտ ընտրվել են հայ ժողովրդի պատգամաւորների ժողովով, բայց անհերքելի է նոյնպէս, որ ոչ պակաս դեր է խաղացել ընտրութիւնների մէջ երկրում տիրող կառավարութեան հայեացքը:

Այս իրողութիւնը այնքան ակնյայտնի է, որ յիշել անգամ աւելորդ է «Դիւան հայոց պատմութեան» մէջ զետեղված բազմաթիւ փաստերը: Յովսէփ կաթողիկոս Արղութեանի պատմութիւնը, որին պ. Լէօն շատ մեծ ազգասէր է յորջորջում, պէտք է որ ծանօթ լինի հայ ընթերցողին: Շատ հետաքրքրական և պարզ ապացոյց են նրա կաթողիկոսութեան շուրջը կատարված դէպքերը, հասկանալու համար որ կառավարութիւնը միշտ մի փոքր աւելի դեր է խաղացել մեր կաթողիկոսների ընտրութեան գործում, քան թէ պատգամաւորների ժողովը: Այժմ էլ պէտք է կարծել, որ պէտք է դեր խաղան նաև մեր վերջին ժամանակի հասարակական կեանքի պրոբլեմներ լուծող կազմակերպութիւնները: Այսպիսով երեք ոյժեր կան, որոնք պիտի որոշեն, թէ ո՞վ կը լինի հայոց կաթողիկոսը: Կառավարութիւնը, ազգի օրինաւոր ընտրված պատգամաւորները և մարդիկ, որոնց ամենահամոզեցուցիչ ապացոյցները բռնի ոյժն է:

Կառավարութիւնը ներկայ հանգամանքներում գուցէ և առանձին կարևորութիւն չը տայ այս հարցին, որոշ տեսակէտով: Սրա պատճառները բազմաթիւ են, որոնց շարքում և երկրի խառն դրութիւնը: Ընտրվելիք պատգամաւորները անկասկած պիտի ընտրեն մի մարդու, որ թէ ինտելիգենտ լինի և թէ փորձառու, բայց ոչ ֆանատիկոս: Գործը կարող են փչացնել, ինչպէս միշտ, այն մարդիկ, որոնք միջոցների խտրութիւն չեն դնում, մարդիկ, որոնք դիմում են բռնութեան. երբոր համոզել չեն կարողանում: Եթէ այդ մարդիկ առանց վայրենի և բռնի միջոցների մտնեն գործին, այն ժամանակ յոյս կարելի կը լինի ունենալ, որ կաթողիկոս կը լինի մի իսկապէս արժանաւոր մարդ:

* *

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Մարտի 14-ին կովկասեան զինւորական-նահանգական դատարանը քննելով Գօրու գաւառի գիւղացիներ՝ Էդիրաշվիլու և Ջանաշվիլու գործը, որոնք մեղադրվում են Խիդիսթավի գիւղացի Դաւիդովի տան վրա զինված յարձակում գործելու մէջ, դատապարտեց Էդիրաշվիլուն մահվան պատժի կախաղանի միջոցով, իսկ Ջանաշվիլուն արդարացրեց:

—

Կովկասեան զինւորական-նահանգական դատարանին են յանձնված—1) զինւորներ՝ Վլադիմիր Տեվզարաձէ, Դիծենկօ և Պաւստովալօվ, որոնք մեղադրվում են Թիֆլիսում 1905 թ. դեկտ. 24-ին Աբրամ Ռաբինովիչի ոսկեղէնի և արծաթեղէնի խանութից 12,000 րուբլու զանազան իրեր յափշտակելու մէջ. 2) Ռաչինի գաւառի գիւղացի Իվան Չլանձէ, 18 տարեկան, այս տարվայ մարտի 3-ին, Թիֆլիսում, կապալառու Մովսէս Օհանեանի վրա յարձակվելու և ոստիկանութեանը զինված դիմադրութիւն ցոյց տալու մէջ. 3) Շուշու գաւառի բնակիչ Շամիր Մամէդ-Հասան-օղլի, որ մեղադրվում է 1907 թ. նոյեմբերին Ուչօղլան գիւղում շինական Նամակատարի վրա զինված յարձակում գործելու մէջ:

ՄԻ ՆՈՐԱԿԱԶՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Նոյեմբերին Երևանում մի խումբ հայ մարդկանց մէջ համակրելի միտք էր ծագել անպատճառ մի մեծ և օգտակար գործ կատարել: Այդ գաղափարով էլ նրանք ոգևորված կազմել էին «Երևանի նահանգում օգտակար գիտելիքներ տարածող ընկերութեան» կանոնադրութիւն, ի հարկէ, ըստ նմանութեան Թիֆլիսի համանուն ընկերութեան, և առաջարկել Երևանի նահանգապետի հաստատութեան, որն ստացվել էր այս փետրվարին: Այդ հաստատութիւնն ստանալուց յետոյ նախաձեռնողները մարտի 9-ին ժողով էին հրաւիրել անդամներին և համակրողներին ծանօթացնելու համար նրանց ընկ. կանոնադրութեան հետ և վարչութեան ընտրութիւն կատարելու:

Ժողովը կայացաւ ս. Գայիանեան օրիորդաց դպրոցի դահլիճում, մօտ 50 անդամների մասնակցութեամբ, և այդ օրն ընտրված համարվեցին վարչութեան համար մօտ 10 թեկնածուներից 4-ը:

Առ հասարակ համակրութեամբ վերաբերվելով ամեն մի գործի, որի նպատակն է լինում այս կամ այն ծառայութիւնը մատուցանել հասարակութեան, ցանկանում ենք այդ գործին կատարեալ աջողութիւն:

Քանի որ այդ ժողովում ամենամեծ վիճաբանութեան առարկայ եղաւ այն հարցը, թէ ինչ կարիք կայ բանալ մի այդպիսի նոր ընկերութիւն, մինչդեռ բարեգործական ընկ. նոր ծրագրով պէտք է կատարէ ոչ միայն զուտ բարեգործական, այլ և կրթական-կուլտուրական գործ և նրա ճիւղը շուտով վերաբացվելու է Երևանում,—ուստի աւելորդ չենք համարում այդ մասին ասել մի քանի խօսք:

Այդ երկու ընկերութիւնների ծրագիրների համեմատութիւնից, որ թեթևակի կերպով արվեց այդ ժողովում, պարզվեցին հետևեալ խոշոր տարբերութիւնները դրանց մէջ, որոնք և, ըստ ժողովի եզրակացութեան, առաջին առաւելութիւն էին տալիս այս նորակազմ ընկերութեան.

ա) Որ մինչդեռ բարեգ. ընկերութիւնը նեղ ազգայնական հաստատութիւնն է, որ ֆիզիքական ու մտաւոր օժանդակութիւնն պէտք է ստանան միմիայն հայերը. այս նոր ընկերութիւնն, ընդհակառակն, աւելի լայն աշխարհահայեացք ունի. նա ձեռք է մեկնելու հաւասարապէս թէ հային, թէ ռուսին, թէ թուրքին, թէ նասրանուն և այլն. մի խօսքով սա մի համամարդկային կամ միջազգային գործ է:

2) Որ մինչդեռ բարեգ. ընկ. միջոցների մի խոշոր մասը պէտք է ծախսվի զուտ բարեգործական նպատակներով, այսինքն բաւականութիւն տալու մարդկանց միմիայն քաղցած ու մերկ մարմիններին, այս նոր ընկերութիւնն, ընդհակառակն, առավ-գլխով միայն անձնատուր պէտք է լինի զուտ մտաւոր կուլտուրական նպատակների, իրան բոլորովին բարձր պահելով մարմնի հոգսերով զբաղվելուց:

3) Որ մինչդեռ բարեգ. ընկ. ճիւղերը որոշ կապ և կախումն ունեն Թիֆլիսի կենտրոնից, իբրև իրանցից աւելի բարձր մարմնից, այս նոր ընկերութիւնն, ընդհակառակը, բոլորովին ինքնագլուխ է և ազատ իր բոլոր գործողութիւնների մէջ:

4) Որ բարեգ. ընկ. իրաւունք չունի ժողովրդական համալսարան բանալու, իսկ այս նոր ընկերութիւնն այդ կարող է:

Բացի դրանից ժողովականներից շատերի մէջ ջերմ ցանկութիւն կար անպատճառ նոր գործ սկսած լինել, նոր մարդկանց ձեռքով, քանի որ հին յայտնի գործիչների շուրջը խմբվելը նրանց… ձանձրալի է… և երկիւղ էին կրում նոր քացախը հին տիկերի մէջ լցնելուց…

Թէ որքան կենսունակ կը լինի այսօր ընկերութիւնն իր լայնածաւալ, տիեզերածաւալ ծրագրով, դա անշուշտ ցոյց կը տայ մօտիկ ապագան, թէև նրանից խիստ շնորհակալ կը լինի Երևանի ազգաբնակութիւնը, եթէ նա գլուխ բերէ թէկուզ հէնց մի բան—Երևանում, եթէ ոչ ժողովրդական համալսարան, գոնէ մշտական կանոնաւոր դասախօսութիւններ կազմակերպելու գործը, որից բոլորովին զուրկ է մեր ժողովուրդը:

Կրկնում ենք, եթէ այս մի հատիկ բանը կարողանայ իրագործել այս նորաստեղծ ընկերութիւնը, նա բաւականին արժանի կը լինի իր այդ մեծագոռոզ կոչման:

Աւելորդ համարելով քննադատութեան ենթարկել վերոյիշեալ պատճառաբանութիւնները, որոնց հիմքերը մեզ թւում են շատ խախուտ, պէտք է սակայն յիշենք, որ այս նոր ընկերութեան լոյս աշխարհ գալը հետևանք կարելի է համարել որքան նոր գործիչների տածած ձանձրոյթի դէպի հին գործիչները, նոյնքան էլ այս վերջինների դանդաղաշարժութեան:

Յիրաւի, արդէն քանի ամիս է հաստատվել է բարեգործական ընկերութեան նոր ընդարձակված ծրագիրը, և դեռ ոչ ոք մատը մատին չէ խփում նրա նախկին ճիւղը Երևանում վերաբանալու համար. արդեօք Թիֆլիսի կենտրոնն է հանգիստ նստել և սպասում, որ Երևանից իրան դիմեն ու թոյլտուութիւն խնդրեն ճիւղը բանալու, թէ՞ Երևանն է սպասում, որ ամեն բան նրան ի վերուստ կարգադրեն: Շարունակ լսում ենք թէ շուտով բացվելու է այդ ճիւղը, բայց և այնպէս դեռ ամեն ինչ քնած է…

Որքան էլ ընդարձակ ծրագիր ունենայ Երևանի նորակազմ այդ միջազգային ընկերութիւնը, այնուամենայնիւ բարեգործական ընկերութիւնը մեծ դեր ունի կատարելու մեր քաղաքի և շրջակայքի հայութեան համար և նրա աջողութեան գրաւականներ կարող են լինել թէ նրա անցեալը, թէ կենտրոնի այժմեան ղեկավարների վայելած մեծ ժողովրդականութիւնը, թէ ծրագրի զուտ բարեգործական կողմը, որը ամեն քայլափոխում անհրաժեշտութիւն է, և թէ այդ ծրագրի աւելի ընդարձակումը, որը լայն ասպարէզ է բանում նրա առաջ գործելու ոչ միայն զուտ բարեգործական, այլ և կուլտուրական-կրթական ասպարէզներում:

Լ. Մարկոսեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Հինգշաբթի օրը, մարտի 13-ին, արքունական թատրոնում նշանակված հայոց ներկայացումը, յօգուտ հանգուցեալ Պետրոսեանի ընտանիքի, չը կայացաւ… որովհետև տոմսակները չէին վաճառվել: Գուցէ մասամբ պատճառն էլ վատ եղանակն էր և սաստիկ անձրևը, որ այդ օրն ամբողջ տեղում էր:

Մասամբ մեղաւոր է, ի հարկէ, և դրամատիկական ընկերութիւնը, որ իր ժամանակին չէ տուեց այդ ներկայացումը, բայց ամենամեծ մեղքն ընկնում է, ի հարկէ, հայ հասարակութեան վրա, որ այդքան շուտ մոռանում է իր գործողներին։

---

*) Նորին սրբ-ը, ասում են, նաև գրագող էր Թանգարանի ձեռագրերի: Աստուած ողորմի հոգուն. նա մեռած է:

—

Մարտի 14-ին, ուրբաթ, Թիֆլիսի ժողովարանում, տեղական մուսուլման սիրողները՝ ղեկավարութեամբ Արաբլինսկու՝ տըւին Թուրքերէն մի ներկայացում, այն է «Դժբաղդ երեխան», դրամա, հեղին. Կազանի, և «Տնային կրթութիւն», փօղվիլ Վեզիրօվի։ Կանացի դերերը կատարում էին ոչ թըրքուհիներ, այլ հրէուհիներ։ Դրամայի նիւթը վերցված է թիւրքական կեանքից. 16 տարեկան ջահել աղջիկ Այիշա-խանումը (կատարում էր տ. Շամնօվա) սիրում է իր հօրեղբօրորդուն՝ Աթաբէկին, որ 19 տարեկան մի ուսանող է Կ. Պօլսի բժշկական դպրոցում, բայց չքաւոր է, և որբ մնացած լինելով, դաստիարակվել և մեծացել է իր հօրեղբօր՝ Խալիլ-բէկի (Այիշայի հօր) տանը։ Աթաբէկը մեծ ապագայ է խոստանում և նոյնպէս սիրում է Այիշային։ Սակայն Այիշայի մայրը՝ Թահիրա-խանումը (տ. Բախի) կամենում է աղջկան տալ մի այլ անձի, մի հարուստ վաճառականի։ Դրաման այդտեղից և սկսվում է։

Այիշայի դերը, մի ջահել աղջկայ, որին դեռ անծանօթ են սիրոյ բոլոր զգացումները, բայց նոր է համակվել այդ զգացումով և որը իր որդիական պարտքն է համարում հպատակվել ծնողների կամքին, կատարեց բաւական գեղեցիկ տ. Շամնօվան։ Աւելի գեղեցիկ կատարեց մօր դերը տիկին Բախիլը, որ շատ լաւ տիրապետում էր և թուրք լեզուին։ Ուսանողի դերը կատարում էր Արաբլինսկին, որ բաւական փորձված և հմուտ դերասան է երևում։ Ի հարկէ, աւելի լաւ կը լինէր, եթէ թուրք սիրողները ներկայացնէին իրանց թուրքական և ոչ օսմանեան կեանքից վերցված պիէսներ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մանգլիս, 9 մարտի

Վերջերս մի տարօրինակ գողութիւն երևան հանվեց Մանգլիսում։ Հայոց եկեղեցուց գողերը դուրս են հանել 35 րուբլի փող։ Եղելութիւնը կատարվել է շատ տարօրինակ. գողերը, կամ գողը, այնպէս են մտել եկեղեցի, որ չեն փչացրել 2 մեծ դռները և լուսամուտները։ Մտնողը կոտրել է խորանի դուռը, վերցրել է միայն 35 րուբլի փող և աննկատացել, ձեռնամուխ չը լինելով եկեղեցու ոչ մի զարդին և իրեղէններին։ Ջի՞ որ լաւ գող էր։ Հետևապէս պիտի եզրակացնել, որ շատ լաւ տեղեակ մարդ էր գողը, որ անըմբռնելի հնարագիտութեամբ մտնում է եկեղեցի և դուրս գալիս, կարծես մի ոգի լինի։ Ի զուր չեն ասում՝ եթէ գողը տանիցը լինի, եզը հերթիցը կը հանին։ Երէցփոխը չէ դիմում որևիցէ միջոցի, չէ հրաւիրում հասարակութեանը տեսնել եղած գողութիւնը, աւելորդ բաներ է համարում. յայտնում է այն ժամանակ, երբ երէցփոխանական հաշիւ էր տալիս հասարակութեանը և գործակալին։ Եւ ահա փաստօրապէս ցոյց է տալիս, որ 35 րուբլի գողացել են։ Գործակալը արձանագրում է, եկեղեցու խնամակալ հայերն էլ լուռ ու մունջ լսում են, կարծես թէ հենց այդպէս էլ պիտի լինի, ինչ զարմանալու բան է։ Այնուամենայնիւ գտնվում է մէկը, որը շատ խելացի նկատողութիւն է անում, թէ ինչի՞ց, ո՞րտեղից արդեօք հաւատալի իմանանք, որ 35 րուբլի են գողացել և ոչ աւել կամ պակաս, քանի որ փողերը պահվում էին անկարգ և չէին ներմուծված հաշւեմատեանում։ Երէցփոխը պատասխանում է, որ նա գիտէ և թէ ինքը պատրաստ է լրացնելու բոլորը, եթէ աւելն որքան է պակաս։ Մի ծիծաղելի պատասխան։ Ինչո՞ւ էին պապանձվել մեր Մանգլիսի ծերունիները, ոչինչ չէին ասում, կարծես մի քար էր ընկել նրանց գլխին և խելքից զրկել։ Մարդ այդ ծերունիներին պիտի տեսնէ այն ժամանակ, երբ երէցփոխ են ընտրում. թէ ինչպիսի դոռում ու գոչումներ են վեր բարձրացնում, որ եկեղեցին իրանցն է, իրանք պիտի պահեն, պահպանեն ու զարդարեն և թէ ոչ ոք չը պիտի մօտենայ եկեղեցուն, քանի որ իրանք ունեն միայն աստուածատուր իրաւունք, իբրև հարազատներ։ Խորհրդաւոր է երէցփոխի պաշտօնը մեր Մանգլիսում, ունի նա մի այնպիսի ձգողական ույժ ու հրապոյր, որ մեր բարոյապէս սնանկացած ծերունիները, մոռացած ամեն բան, գլխիկոր ու սրտատրոփ վազում են դէպի այդ պաշտօնը, որ ինչ է ձեռք բերեն։ Վերջապէս։

Օգուտ քաղելով այս դէպքից, կը ցանկանայի տեղեկացնել ընթերցող հայ հասարակութեանը, որ ոչ թէ այդպիսի գողութիւն, այլ աւելի մեծ ու մեծ բաներ են եկել ու անցկացել մեր եկեղեցու գլխով։ Մօտ 30 տարի է, որ այդ եկեղեցին կառուցվել է մի այսպիսի յայտնի ամառանոցում. մշտական եկւորներից եղել է օժանդակութիւն, բայց ինչ է մնացել այդ բոլորից, համարեա ոչինչ։ Իբրև ապացոյց, թէ որքան խնամք են թափել մեր վաղեմի երէցփոխները և եկեղեցու հայրերը նրա փառքի ու շուքի համար, ամենից լաւ վկայում է ինքը եկեղեցին, որը այսօր "ողբալի դրութեան է հասցված՝ կատարեալ մերկ ներսից ու դրսից, անզարդ, անբարեկարգ, պատառոտած, քանդված, առանց ներկի, տանիքից կաթելիս, հնացած, սևանի պատը ճեղքված, նախադռները հնացած ու փուլ գալիս, այնպէս աչքաթող արած, որ թռչունները անգամ նախադռներում իրանց համար բոյն են շինում, և այլ շատ պակասութիւններ։ Եկեղեցին այսպիսի դրութեան մէջ պիտի լինի, քանի որ նրա փէշաքար սնապարծ սպասաւորը ապերախտ է, շահագործում է այդ սրբավայրը, դարձրել է նրան իր քմահաճութիւնների առարկայ. միւս աշխարհական սպասաւորը, կեղծաւոր փարիսեցու պէս, հոգու փրկութեան տենչով վարակված, եկեղեցու գաւթում թաղվելու համար տեղեր է կորզում օր ցերեկով. երրորդը եկեղեցու փողերի տեղ արկղում տեղաւորում է անպէտք պարտամուրհակներ. Խոմանք էլ, չը ճանաչելով ոչ գիր և ոչ կիրակոս, սեփականացնում են, ինչ որ իրանց ձեռքն է ընկնում։

Տ.-Ե.

ՄԻ ԶՈՀ ԵՒՍ

—

Մի զոհ ևս…

Արփիար Արփիարեանը սպանված է։ Զաբաքարծի գնդակի զոհ դարձաւ մի մարդ ևս, որ երկար ու ձիգ տարիներ եռանդով գործել է մեր գրական ասպարէզում։ Կնքեց իր մահկանացուն մէկը այն սակաւաթիւներից, որի կուռ միակ զէնքը եղել է գրիչը, հրապարակախօսութիւնը։ Այրիացած հայոց գրականութիւնն այսօր ողբում է իր տաղանդաւոր հրապարակախօսի մահը, մտաւոր կեանքն այսօր սգում է այդ թանգագին կորուստը։

Ինչո՞ւ սպանեցին նրան, ինչ կապ կարող էր լինել հրապարակախօսի և մարդասպանի միջև։ Միթէ նա սպանութեան արժանի մարդ էր, միթէ կարիք կար վերջ տալու այն մարդու կեանքին, որ դեռ ապրելու իրաւունք ունէր, որ բեղմնաւոր գործունէութեան մի շարք գրաւականներ էր տուել մեզ։ Ի՞նչ շարժառիթներից դրդված սպանեցին նրան. չէ՞ որ նա գրչի մշակ էր, չէ՞ որ գործունէութեան ասպարէզը մաքուր էր…

Որ Արփիարեանի սպանութիւնը քաղաքական սատար ունի, — այդ ակներև է ամենքիս համար. որ նրա սպանութեան պարագաները քաղաքական բնոյթ են կրում, — այդ նոյնպէս պարզ է։ Երկար կանգ առնել այդ պարզ իրողութեան վրա, — կը նշանակէ ժամավաճառ լինել։ Արփիարեանի սպանութիւնն ինձ յիշեցնում է Հերցենշտէյնի և Իօլլօսի սպանութիւնը։ Մենք զօրեղ նմանութիւն ենք գտնում օտար և հայ գրողի այդ սպանութեան պարագաների մէջ։ Եթէ Հերցենշտէյն և Իօլլօս ընկան «իսկական ռուս մարդկանց» գնդակից, այստեղ, մեզնում, Արփիարեան ընկաւ «իսկական հայ մարդկանց» գնդակից։ Երկու դէպքումն էլ գործող տարրերը նոյնն են. տարբերութիւնը կայանում է նրանում միայն, որ մի տեղ չարագործը հանդէս է գալիս օտար մթնոլորտում, Տերեօքում և Մօսկվայում, իսկ միւս տեղ՝ մեր շրջապատում, հայկական կեանքում, — Կահիրէում։ Երկու դէպքումն էլ կատարված է ոճրագործութիւն, մի մեծ յանցանք։ Դա մի դահճային զազիր գործ է, որ դատապարտել կարելի է միայն. դա մի օտար երևոյթ է, որ կարժանանայ հասարակութեան զզուանքին միայն։ Իմ յիշողութեան մէջ դեռ թարմ է այն, թէ ինչպէս Ռուսաստանի մտածող տարրը, բանիմաց մասն և առաջադէմ ինտելիգենցիան բողոքեցին Հերցենշտէյնի և Իօլլօսի սպանութեան դէմ և միահամուռ կերպով դատապարտեցին նրա նախաձեռնողների այդ քայլը։ Դեռ լաւ յիշում եմ, թէ ինչպէս Ռուսաստանի լաւագոյն մամուլը քննելով նրա սպանութեան շարժառիթներն ու պարագաները, գտաւ, որ կուլի այդ միջոցը գրականագէտ հակառակորդի դէմ, միանգամայն արհամարհանքի արժանի է, որ դա անկուլտուրական միջոց է…

Սպանել մարդուն — այդ կը նշանակէ զօրեղ յանցանք գործել. զէնքի ույժով վերջ դնել գրականագէտի կեանքին — կը նշանակէ բարբարոսութիւն անել և մեղանչել գրական էտիկայի դէմ։ Դրանք անկուլտուրական ազգերին յատուկ միջոցներ են, որ մեծ չափով զարգացած է մեզ մօտ. ժամանակ է հրաժարվելու այդ հին, փտած և մեռելութեան մատնված միջոցներից։ Ժամանակ է դադարել ասիացի լինելուց, անհրաժեշտ է ապրել կուլտուրական կեանքով, պէտք է դէն ձգել քաղաքակրթութեան կեղծ դիմակը և իսկական պատկերով հրապարակ գալ։ Դադարեցէք գիտութիւն և լուսաւորութիւն շահագործելուց, պատռեցէք «սօցիալիստական» այդ անարգ քօղը ձեր դէմքերից, սիրեցէք անկեղծութեամբ և պարզութեամբ գործել կեանքում։ Ցոյց տուէք, պարոններ, որ գաղափարական հողի վրա, ձեր հակառակորդի դէմ, կուելու ընդունակ էք։ Բարոյական-կուլտուրական կռիւ — այդ ես հասկանում եմ, մտաւոր-գրչի կռիւ — այդ ես ընդունում եմ։ Մտքերի և գաղափարների կռւին ես յարգում եմ։ Բայց ֆիզիքապէս անզօրին և տկարին մահացնել և խողխողել — այդ ես դատապարտում եմ միանգամայն։ Ձեռք բարձրացնել այն մարդու կեանքի դէմ, որի կուռ միակ զէնքը գրիչն է, — այդ կը նշանակէ բարոյական մահ ընդունել. գրչի դիմաց ատրճանակ ունենալ — այդ կը նշանակէ պարտված և դատապարտված լինել ժողովրդի մտածող տարրի կողմից, հասարակութեան մէջ լաւագոյն մասի արհամարհանքին արժանանալ։

Եւ եթէ այսօր «իսկական հայ մարդիկ» վերջ դրին Արփիարեանի կեանքին, այդ դեռ չէ նշանակում, որ նրա մահը եկաւ նուաղեցնելու «Մշակի» և նրա շուրջը խմբված համակրողների թիւը. ոչ, Արփիարեանների մահը կը գայ հիմնաքար ծառայելու «Մշակի» շարքերի խտացման, կրկնապատկելու և եռապատկելու նրա դրօշի տակ գործողների եռանդը։ Մենք միշտ պատրաստ ենք ասելու մեր խօսքը, կռուելու նրանց դէմ ոչ թէ զէնքով, այլ կուլտուրական զօրեղ միջոցով — գրչով, որի բարոյական արժէքն և նշանակութիւնն առաւել է, քան ձեր, պարոններ, սախական և բռնի միջոցները։

Արփիարեան դեռ երկար ժամանակ կարող էր գործել, բայց վերահաս մահը, դժբաղդաբար, վերջ դրեց նրա բեղմնաւոր գրչին, գործունէութեանը։ Ամօթ նրա սպանութեան նախաձեռնողներին։

Ես վերջացնում եմ տողերս և թոյլ տալիս ինձ ևս՝ իմ խորին վիշտն և ցաւակցութիւնն արտայայտելու տաղանդաւոր հրապարակախօս-բելլետրիստ Արփիար Արփիարեանի մահվան առիթով։

Ռսկու-Զօն

ԱՐՓԻԱՐԻ ՄԱՀԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

—

Ստացանք Բագուից — 1) տիկին Հրաչեայ — 5 ր., 2) Կ. Խատիսեան — 10 ր., 3) Հայկ Տէր-Միքայէլեան — 5 ր., 4) Հայկ Գեանջունցեան — 3 ր., 5) Նիկ. Քարամեան — 1 ր., գումարն է 24 րուբլի։ Ուրեմն ստացել ենք ընդամենը 140 րուբլի։

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

I

Ինչքան մօտ ենք տարածութեամբ վրաց ժողովրդի հետ, ինչքան բաղդակից ենք վրացիների հետ պատմական և քաղաքական կեանքով, նոյնչափ անտեղեակ ենք միմեանց կեանքին։ Գուցէ շատ էլ սխալված չը լինեմ, եթէ ասեմ, որ իրար չենք ճանաչում, և կարծէք մի բան կայ, մի վիհ մեր և վացիների մէջ, որը մեզ անջատում է իրարից։ Կարծէք բնազդաբար փախչում ենք իրարից։ Դա ամենացաւոտ կողմերից մէկն է մեր Կովկասի ազգերի մէջ։ Մինչդեռ գիւղական, գաւառական հայը և վրացին իրար հետ աւելի մօտ են և խորթ չեն զգում, մեծ քաղաքներում՝ կենտրոններում, որտեղից է կեանքն ազդանշան ստանում և կեանքի երևոյթների վախճան տրվում, այդտեղ՝ կենտրոններում, ուր ժողովրդի մտքի և գիտութեան ներկայացուցիչներն են գտնվում, ահա այդտեղ ցեղական այդ մտերմութիւնը աւելի է բացակայում։ Շեշտելով այդ խորթութիւնը, այսուհետև փոքր ինչ նպաստելու եմ, որ հայ մամուլը, հայ ընթերցող հասարակութիւնը փոքր ինչ տեղեակ լինի վրաց կեանքում պատահող երևոյթներին։ Այսուհետև երբեմն-երբեմն «Մշակի» էջերում «Վրաց կեանքից» ընդհանուր խորագրի տակ կըտանք համառօտ տեղեկութիւններ վրաց կրթական-կուլտուրական բարեգործական հիմնարկութիւնների շուրջը արծարծվող հարցերի մասին և թէ առ հասարակ վրաց կեանքում, գլխաւորապէս գաւառական կեանքում, տեղ բռնող երևոյթների մասին։

Վրացիք էլ նոյնչափ, գուցէ և աւելի, անտեղեակ են մեզ և կարծէք մեզ պէս նրանք էլ երկրորդական նշանակութիւն են տուել դրացու անցեալ, ներկայ և ապագայ կեանքի ուսումնասիրութեանը։ Դա սխալ է և երկուստեք դատապարտելի. ամեն կերպ ջանալ պէտք է այդ անտարբերութիւնը մէջտեղից վերացնելու, և յորդոր ենք կարդում մեր հարևան ազգերի ժողովրդի մէջ գործող ամեն կարգի մարդկանց փոխադարձաբար հետաքրքրեցնել ժողովրդին և ծանօթացնել իրար և միմեանց դրա մէջ տեսնել մեր երկրի ժողովրդի ապագայ բարեկեցութիւնը։

Ս. Սարկ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի բօրսային կօմիտէտը որոշել է մասնակցել Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվի օֆիցերական ծառայութեան 50-ամեայ յօբելեանին։ Այդ նպատակով նա մի յատուկ պատգամաւորութիւն է ընտրել, որը, ի թիւս միւսների, կը շնորհաւորէ կօմսին պալատում։

◆ Վերջին շաբաթս, մարտի 7—13-ը, Թիֆլիսում նկատվել են հետևեալ հիւանդութիւնները. բծաւոր տիֆ՝ 13 դէպք, վարակիչ տիֆ՝ 4, ծաղիկ՝ 3, կարմրուկ՝ 15, քութէշ՝ 19, բզզաւ 6։ Վարակիչ հիւանդութիւնները տարածված են աւելի 1-ին, 2-դ և 10-դ քաղաքամասերում։

◆ Գուրիայից «Зак.» լրագրին գրում են. «Համբերութիւնից ելած զանազան շանտաժիստների և խուլիգանների գործողութիւններից, գուրիացիները ամենուրեք շինական դիւանատներին կից ժողովներ են գումարում և ընդհանուր որոշման համաձայն կալանաւորում են կասկածելի անձերին։ Շատերը արդէն յանձնված են ոստիկանութեան ձեռքը՝ Գուրիայից աքսորելու համար։ Մօտ օրերս ձերբակալվել են 30 շանտաժիստներ Ջէմօխէբսկի հասարակութեան մէջ»։

◆ Թիֆլիսի III արական գիմնազիայի բոլոր դասարաններում, բացի 6-րդից, վաղվանից սկսվում են կանոնաւոր պարապմունքները։ 6-րդ դասարանի աշակերտները արձակված են. միևնոյն ժամանակ նրանց իրաւունք է տրված խնդրագիր ներկայացնել՝ այս տարվայ օգոստոսին իրանց վերընդունելու համար։ Բոլորին խստիւ արգելված է ոտք դնել գիմնազիայի շինութեան մէջ։ Այս արգելքը խախտողները զրկվում են վերընդունելութեան համար խնդրագիր ներկայացնելու իրաւունքից։

◆ Թիֆլիսի II կլաս. գիմնազիայի գլխաւոր դասարաններում կանոնաւոր պարապմունքները հաւանօրէն կը վերսկսվեն վաղվանից։ Գիմնազիայից որոշված է արձակել 50 աշակերտների։

◆ Թիֆլիսի դումայի ձայնաւորների մի խումբ հարց է յարուցել, որ Թիֆլիս քաղաքն էլ մասնակցէ Լ. Ն. Տօլստոյի ծննդեան 80-ամեակին։ Իսկ թէ ինչ եղանակով մասնակցել, այդ հարցը նրանք կը զեկուցանեն դումայի առաջիկայ նիստերից մէկում։

◆ Ցենզուրայի կօմիտէտի կարգադրութեամբ, «Հերմէս» տպարանից երէկ, մարտի 15-ին, գրաւվեցին «Կեանքի» գրադարանի հրատարակութեամբ լոյս տեսած «Կարլ Կաուցկու ռեֆերատը Կարլ Մարքսի մասին», Եսայեմի թարգմանութեամբ և Բ. Իշխանեանի առաջաբանով ու Մարքսի նկարով։

◆ Թիֆլիսի ֆինանսական մասնաժողովը պարզեց, որ 1908 թ. քաղաքային նախահաշւում գոյանում է 130,000 րուբլի դեֆիցիտ։ Այս դեֆիցիտը ծածկելու համար քաղաքային վարչութիւնը, բացի այն որ գնահատման տուրքը հասցրեց լիակատար տոկոսի, այժմ վճռել է աւելացնել քաղաքային Ջրանցքի ջրի վճարը։

◆ Մարտի 13-ին, Թիֆլիսի քաղաքային սանիտարական-բժշկական տեսուչ պ. Ստեփանեանի նախագահութեամբ, կայացաւ սանիտարական-բժշկական խորհրդի նիստը։ Խորհուրդը, լսելով քաղաքում տարածված տարափոխիկ հիւանդութիւնների ընթացքի մասին կազմված տեղեկութիւնները, անհրաժեշտ գտաւ տիֆային հիւանդանոցի համար յատկացրած գումարներից 10 մահճակալով մի բաժանմունք բանալ երկու նոր փայտէ բարաքներում՝ կասկածաւոր հիւանդների համար։ Որոշվեց այն վիրաբուժական գործիքները, որոնք մնացել են վիրաբուժական հիւանդանոցը փակվելուց յետոյ, բաժանել քաղաքային հիւանդանոցների միջև։ Քաղաքային ծառայողներին բժշկական քննութեան ենթարկելու համար որոշվեց իրաւունք տալ սանիտարական-բժշկական տեսչին իւրաքանչիւր դէպքում մասնաժողով կազմել մասնագէտ անձերից։ Ապա մի մասնաժողով ընտրվեց հիւանդանոցների կառավարիչներից, որ մշակելու է մի քանի կանոններ, որոնց համաձայն ստացվելու է տուրք քաղաքային հիւանդանոցներից օգտվողներից։ Սանիտարական-բժշկական տեսչի օգնական ընտրվեց բժ. Խատամանով։ Վերջում ընդունվեց բժշկական շուտափոյթ օգնութիւն հասցնելու նախագիծը, որ կազմել են բժիշկներ Իգիթեան, Թաղէոսեան, Խարազեան և Քալանթարեան։ Մասնաժողովը ընդհանուր առմամբ այդ հարցը վաղաժամ ընդունեց քաղաքում հիւանդանոց չը լինելու պատճառով։ Նախագիծը կը յանձնվի քաղաքային վարչութեան և դումայի քննութեան։

◆ Այսօր, Թիֆլիսի բժ. ընկ. շինութեան մէջ (Ալէքսանդրեան այգի) տեղի կունենայ ժողովրդական դասախօսութիւն։ Բժ. Ն. Խատիսեանը կը կարդայ մարդու անատոմիայի և ֆիզիօլօգիայի մասին։ Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն մոգական պատկերներ։ Սկիզբն է երեկոյեան ժամը 6-ին։

◆ Թիֆլիսի նահանգական մառակարարական յանձնաժողովը երէկ մեկնեց Սարթիս-ճալա գաւառամասը՝ ազգաբնակութեան կարիքի չափը որոշելու համար։

◆ Պարսկաստանի ռուսաց դեսպանը յայտնել է Կովկասի Փոխարքային, որ, Թեհրանի կայսերական միսիայի հաղորդագրութեան համաձայն, որովհետև վտանգ կայ թէ մի գուցէ Մեկկայից խօլերա և Քերբելայից ժանտախտ տարածվի, կարգադրութիւն է արված, որ արգելվի ուխտաւորներին այդ սրբատեղիները ուխտ գնալ Պարսկաստանից Քիրմանշահի վրայով, ինչպէս և կարանտին հաստատվի նրանց համար, որոնք վերադառնում են այնտեղերից այդ քաղաքի վրայով։

◆ «Նոր դրամայի» խմբի ներկայացումը, որ յետաձգվեց մարտի 8-ին լուսաւորութեան բացակայութեան պատճառով, կայանալու է մարտի 29-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Զուբալօվի ժողովրդական տանը։

◆ Թիֆլիսի դումայի վաղվայ նիստում, ի միջի այլոց, քննվելու են՝ քաղաքային այն հողերի գնահատման հարցը, որոնք գրաւվել են երկաթուղիների համար, Մուխրանեան կամուրջի մասին քաղաքային վարչութեան կազմած զեկուցագիրը և քաղաքային ծառայողների փոխատու-խնայողական գանձարանի գործունէութիւնը վերսկսելու խնդիրը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը տեղեկացրել է Թիֆլիսի ոստիկանապետին, որ նա թոյլատրել է Սօլօլակի տունէլում աշխատանքները կատարել ամեն երեկոյ ժամը 6-ին և գիշերվայ ժամը 12-ին։

◆ Թիֆլիսի նահանգապետը խնդրել է քաղաքագլխին՝ տեղեկացնել իրան, թէ քաղաքային ծառայողներին և ինչ քանակով, ինչպէս և դումայի ո՞ր որոշումների համաձայն է քաղաքային վարչութիւնը նպաստներ տուել այն գումարներից, որոնց վարչութիւնը իրաւունք ունի ծախսել այս տարվայ յունվար և փետրվար ամիսներում։

◆ Գարնան սկզբին Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցի բարձր դասարանի 25 աշակերտները մեկնելու են Պետերբուրգ և Մօսկվա գործարանները և գավօդները դիտելու համար։

◆ Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցում մտադրութիւն կայ գերձականոց բանալ։

◆ Լեռնային վարչութեան տեղեկութիւններից երևում է, որ փետրվար ամսվայ ընթացքում Բագուի նաւթահանքերից արտադրված է ընդամենը 39700 պուդ նաւթ. Բիբի-Հէյբաթում նաւթահորերը խփել են 500,000 պուդ նաւթ։

◆ Եկատերինօդարից գրում են, որ Կուբանեան շրջանի կառավարիչը մարտի 8-ին ստացել է հետևեալ հեռագիրը. «Եկատերինօդարի քաղաքային դումայի ձայնաւորների ընտրութիւնները սենատը արգելեց. այս օրերս այդ մասին մի ուկազ կը հրատարակվի»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 15 մարտի

Հայոց ազգագրական ընկերութեան խորհուրդը խորին շնորհակալութիւն է յայտնում պ. Հմայեակ Վահանեանին, որ հանձեց Էրնեստ Շանտրի Կովկասի հնագիտական-մարդաբանական ուսումնասիրութեան վերաբերեալ բոլոր աշխատութիւնները՝ 7 գրքերից բաղկացած՝ և մի քանի այլ գրքոյկներ, 1600 ֆր. արժողութեամբ, նուիրել ընկերութեանս մարդաբանական-կովկասագիտական գրադարանին։

Նախագահ՝ Ա. Մելիք-Աղաբեան

ՖԵԼԻԵՏՕՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

—

Օրի՛որդ,

Դուք ինձ գրում էք.

«Թողիր քո սուգը, մոծակ, ազազան,
Քո թոյլ խայթոցով չի զգալի գազան,
Դրանց հարկաւոր է մորակ խարազան»։

Հակառակ չեմ։

Արդէն ինքս էլ եկել եմ այն համոզման, որ խայթոցից կարող է ցաւ զգալ նա, որ մարդ է, չէ կորցրել խիղճն ու հոգին և չէ դարձել երկոտանի կատաղի գազան։

Իսկ նա, որ կօպէկի գին չէ տալիս մեր արտասուքին, մեր աղերսանքին, օգնելու տեղ մատնում է մեզ դժոխքի կեանք ու տառապանքին, որ ինքը գաղափարական զոհերի նախատինքը դարձած, ոչ արածը գիտէ, ոչ արատը և ոչ անարատը, — այդպիսիների աչքում իմ թոյլ խայթոցը՝ միևնոյն է թէ, օրիորդ, ձեր քորոցը… ի հարկէ ընկած փողոցում։

Համաձայն եմ, որ դրանց հարկաւոր է մորակ, խարազան, բայց երբ մորակ ունեցող ուժեղները անխռով մի կողմ են քաշվել, լուռ ու մունջ մնալը աւելի լաւ համարել, ինչպէս չը լացեն ինձպէս մոծակ-մժեղները։

Միթէ ուժեղների հզօրութիւնը նրանումն է, որ հարկաւոր դէպքերում մեր ոստիկաններին նման թաղվին, չերևան ու «հարայ»-իդ օգնութեան չը հասնեն… չեմ ասում արիւնգնդակով, քա՛ւ լիցի, ո՛չ, ո՛չ, այլ մի-երկուերեք մորակով…

Ահա՛, տեսէ՛ք,

Գիւղ ու քաղաքներից և ամեն կողմից բողոքներ են լսվում գրչի-մշակի սպանութեան դէմ։

Երբ մեր կազմակերպված ուժեղները իրանց միահամուռ մորակող վճռով չեն գալիս մեզ օգնութեան, որ վերջ տային աջ ու ձախ թափվող անմեղ արեան, երբ ուշանում է վտանգաւոր ախտի վարակման ու տարածման դէմ զզուանքի արտայայտութիւնը, երբ իրանց լռութեամբ կարող են միայն խրախուսվել նմանօրինակ սպանութիւնները…

Էլ ինչպէս այդ ժամանակ սուգի չը նստեմ, ինչպէս ազազելով ծնկանս չը խփեմ, յուսահատ կանչեմ.

Վա՜յ մեզ շատ թանգ նստող անպէտք հզօրութիւն…

Օրի՛որդ,

Դուք գրում էք, որ բժիշկը ձեզ խորհուրդ չէ տալիս տխուր բաներ կարդալու և ձեր ջղերը քայքայելու. եթէ այդպէս է, լաւ կանէիք, եթէ կարդայիք «Բահլուլ» երգիծաբանական թերթի խմբագիր պ. Ալիեվի լոյս ընծայած այս նոր բրօշիւրները.

1. «Բահլուլ», թէ «Բարի լուր»։
2. «Բարի լուրին» հասցրած չար լուրը։
3. Խմբագիր Ալիեվի փախուստը և Թաղայեանի ճանապարհորդական արկածները բանկային և ոստիկանական աշխարհներում։

Բայց ոչ, ինչպէս զուարճանալու համար դուք եկէք այս շաբաթ Բագու գնացէք։

Մեր բարեկամ և աշխատակից Ներկարարը այսպէս է գրում.

«Ով ուզում է փախած ծիծաղը յետ գայ, թող առաջիկայ կիրակի Բագու գայ և տեղական վարկի ընկերութեան ընդհ. ժողովում լինի անպատճառ ներկայ, որովհետև լսելու և տեսնելու շատ «մաղալըս» բան կայ։

Առհասարակ Բագուն մի քաղաք է, ուր

բոյսի տեղ մարդ է բուսնում, ունի բնակիչ քառորդ միլիօն, բայց քաղաքի-զարդ մարդ չեք տեսնում:

Այդ պատճառով էլ երբ գլուխ ունեցող մարդիկ են պէտք գալիս, նրանց միմիայն Կուրսկ քաղաքից են բերել տալիս»:

Ներկարարը ինձնից լաւ է տրամադրուած. յուսամ որ Բագւում նրան անփորձ պահի Աստուած: Եթէ աջողվեց նրան մի ուրախ բան գրել, առաջին պարտքս կը համարեմ ձեզ էլ հաղորդել:—Մինչև իմ այս գրութիւն, առ այժմ կը ցանկամ ձեզ կատարեալ առողջութիւն:

Մոծակ Մտրակեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Պարիզ, 16 մարտի (ն. տ.)

Երէկ Alliançe française ընկերութիւնը, որի նպատակն է ուժեղացնել Ֆրանսիայի ազդեցութիւնը օտար երկրներում, մի դասախօսութիւն էր կազմակերպել: Դասախօսողն էր պ. Դիւրան, որը իբր վաճառական (commi-voyageur) եղել էր Պօլիս, Զմիւռնիա և Հայդար-փաշա (Բաղդադի երկաթուղին): Դասախօսութիւնը շատ հետաքրքրական էր և անհագին բազմութիւն էր գրաւել, ֆրանս. հասարակութեան բոլոր խաւերից: Պ. Դիւրանը պատմում էր, թէ ինչպէս ֆրանսիական առևտուրը ներկայումս ընկած է Թիւրքիայում և ընդհակառակը խիստ բարգաւաճում է գերմանական առևտուրը: Նա պարզ կերպով ապացուցեց, որ գերմ. առևտրի բարգաւաճումը կապված է այն ազդեցութեան հետ, որ ձեռք է բերել Գերմանիան Թիւրքիայում: Այդ, ի հարկէ, հետևանք է վերջին տարիներում Գերմանիայի Թիւրքիայում ունեցած եռանդուն գործունէութեան և Ֆրանսիայի անտարբերութեան: Բաղդադի երկաթուղին, որը դրամի սակաւութեան պատճառով դեռ վերջացած չէ, իրապէս Թիւրքիայի խաղաղ նուաճումն է: Գերմանիայի կայսրը, ինչպէս և գերմանական վաճառականները իբր commi-voyageur-ներ, ճանապարհորդելով Թիւրքիայում, կարողացան սերտ բարեկամական յարաբերութիւններ հաստատել այդ երկրի հետ և ընդարձակել իրանց վաճառականութիւնը: «Ես տեսայ Թիւրքիայում—ասաց դասախօսը,—և լայն ամրոցները, որ շինել են գերմանացիների ձեռքով, Ռուսաստանին դիմադրելու համար, և այն զինանոցները, որ շինվել են գերմանական գեներալների ցուցմունքներով: Գերմանիայի ազդեցութիւնը այնաստիճանի է բարձրացել Թիւրքիայում, որ ով ուզում է մուտք գործել և աջողութիւն ունենալ, պէտք է գործի Գերմանիայի անունով: Յաճախ ֆրանսիական ապրանքը գերմանականի անուան տակ են վաճառում: Ահա թէ որ աստիճանի է հասել Գերմանիայի ազդեցութիւնը»:

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանս-իտալական տօնախմբութիւն Պարիզում.—Մարտի 15-ին Պարիզի Collège de France-ի դահլիճներից մէկում տեղի է ունեցել մի ֆրանս-իտալական տօնախմբութիւն, ի պատիւ իտալական բանաստեղծ Ժիօզուէ Կարդուչչիի: Տօնախմբութեանը նախագահել է Պարիզի իտալական դեսպանը և ներկայ են եղել հանրապետութեան նախկին նախագահ Լուբէ, Անատօլ Ֆրանս և ուրիշ շատ ականաւոր ֆրանսիացիներ: Թէ ֆրանսիական և թէ իտալական թերթերը այդ տօնախմբութիւնը համարում են իբրև մի նոր առիթ այդ երկու հարևան ազգերին միմեանց մերձեցնելու համար:

Ֆրանսիան առեւտրական ճգնաժամում.—«Eclair» լրագրի խօսքով, Ֆրանսիան առևտրական լուրջ ճգնաժամի մէջ է:

Փետրվարի արտածումը պակասեց աւելի քան 28,000,000 ֆրանկով համեմատած անցեալ տարվայ հետ, իսկ ներմուծումը 71,000,000 ֆրանկով, այնպէս որ, ընդամէնը, ֆրանսիական արտաքին առևտրի ընդհանուր շրջանառութիւնը փետրվարի վերջում պակասեց 99,000,000 ֆրանկով:

Օրինագիծ ներումն շնորհելու մասին.—Մարտի 3-ին Կլէմանսօն և Բրիանը պատգամաւորների ժողովում մտցրին մի օրինագիծ, որ վերաբերում է ներման հարցին: Այդ օրինագիծը յանձնվեց իրաւաբանական յանձնաժողովին: Օրինագիծը բաղկացած է չորս յօդուածներից: 1) Կատարել ներումն բոլոր յանցանքների և օրինախախտութիւնների, որ կատարվել են 1907 թւին Ֆրանսիայի հարաւում գինեգործութեան ճգնաժամի ժամանակ,—բացի կեղծումներից և խաբէբայութիւններից: 2) Ներումն այն յանցանքների, որ կատարվել են մինչև մարտի 16. ը. ա) մամուլի միջոցով, բացի զօրքը վիրաւորելուց. բ) ժողովներին, ընտրութիւններին, գործադուլների ժամանակ և այլն. գ) կիրակնօրեայ հանգստութեան վերաբերեալ օրէնքը խախտելու համար: Երրորդ և չորրորդ յօդուածները միայն ձևական նշանակութիւն ունեն: Օրէնքի պատճառաբանութեան մէջ կառավարութիւնը կրկին անգամ շեշտում է, որ հակահայրենասիրական գործողութիւնները ներման չեն ենթարկվում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

14 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Դումայական ֆինանսական յանձնաժողովի մէջ, ուր ներկայ էր նաև ֆինանսների մինիստրը, քննվեց այն հարցը, թէ ինչ արդիւնքներ կը ստացվեն պրօմիսլային հարկ մտցնելով: Մինիստրը ասաց, որ պրօմիսլային հարկ նշանակելով պետական գանձարանի եկամուտները շատացնելու միջով նոր հետևանքներ բնաւ չեն նախատեսվում. նկատի կայ միայն գոյութիւն ունեցող պրօմիսլային հարկը համաձայնեցնել նախագծվող եկամտային հարկի հետ, վերացնել 1898 թ. պրօմիսլային արմատական օրէնքի և 1906 թ. լրացուցիչ հրատարակած օրէնքի միջև եղած անհամակերպումը և ժամանակից անել նաև տեղական հասարակական հաստատութիւնները: Մինիստրութիւնը պրօմիսլային հարկի վերաքննութեամբ չէ ձգտում երբէք պետական եկամուտները աւելացնել: Հարկերը յաջորդաբար աւելացնելու ճանապարհով այնքան էլ խելացի բան չէ ընթանալ: Փաստացի թւանշաններով մինիստրը ընդգծում է այն իրողութիւնը, որ պրօմիսլային հարկը բաւականաչափ ընկել է իր արագ աճելու պատճառով, և մատնանշում է, որ առևտրի ու արդիւնաբերութեան ներկայացուցիչները յայտնել են, որ նրանք իբր թէ փորձերով մեծ վնասներ են կրում 1906 թ. լրացուցիչ օրէնքի ճնշման տակ. նոյն հայեցակէտի վրա, անշուշտ, նրանք կանգնած կը մնան և պրօմիսլային հարկը վերաքննելու ժամանակ, որի նիստերը կը բացվեն մարտի վերջերում: Մինիստրի կարծիքով, հազիւ թէ խելացիութիւն լինի հարկահանութեան պտուտակը պտտեցնել առևտրի ու արդիւնաբերութեան կողմը:

Այնուհետև ժողովը դիմեց կողմնակի հարկերի հարցին: Մինիստրը բացատրեց, որ հնարաւորութիւն կայ իջեցնել թէյի և շաքարի մաքսային տուրքը, աւելացնել ծխախոտի ակցիզը, լուսաւորութեան աղբիւրների տուրքերը. ցանկալի է, որ նաւթը աւելի շատ տարածվի գլխաւորապէս գիւղերում, զարգացնել անտառապահութիւնը, բացառապէս առևտրական հիմքերի վրա դնել երկաթուղիները և աւելացնել երկաթուղիների եկամուտները՝ տարիֆը աւելացնելով:

Մինիստրը ի միջի այլոց ասաց, որ, արդարև, ցանկալի կը լինէր իջեցնել շաքարի և թէյի տուրքերը, եթէ պետութիւնը այն դրութեան մէջ լինէր, երբ կարելի է համարձակ կերպով կանգնել հարկերը թեթևացնելու ճանապարհի վրա: Հազիւ թէ տուրքերի պակասեցումը ազդէ սպառելու աւելացման վրա: Այսպէս, Արևմուտքի փորձը ասում է, որ սպառման մեծանալը չէ ընթացել այն հետևողականութեամբ, ինչպէս պակասել է ակցիզը կամ տարիֆը: Այսպիսի մի ժամանակ, երբ պետութեան առաջ անյետաձգելի պահանջներ են ցցված, երբ նա հարկադրված է նոր հարկեր որոնել, անզգոյշ քայլ է միջոցներ ձեռք չառնել, որոնք վերջում կարող են եկամուտները իջեցնել մինիմում 50 միլիօնով:

Ծխախոտի արտադրութիւնների վրա հարկ նշանակելու առիթով մինիստրը յայտնեց, որ մինիստրութիւնը ջանում է հովանաւորել մանր արդիւնագործներին, մեծ գերակշռութիւն տալով երրորդ տեսակի ծխախոտի աւելի շատ տարածման:

Բամբակի հարցի վերաբերութեամբ մինիստրը նկատեց, որ հարկը 4 րուբլու հասցնելով՝ յոյս կար բամբակագործութիւնը զարգացնել Թուրքեստանում և շուկայից դուրս մղել ամերիկական բամբակը, բայց բոլոր յոյսերը ի դերև ելան:

ՎԵՐՆԻ: Բացվեց Սիբիրի բանկի բաժանմունք:

15 մարտի

ՌԱԴՕՄ: Եկլին արուարձանում գտնվեց գաղտնի տպարան: Ռադօմում ձերբակալված են լեհական սօցիալիստ կուսակցութեան տեղական ռազմիկ խմբի անդամները:

Արտաքին

ՀՌՕՄ: Թագաւորը և արտաքին գործերի մինիստրը վերադարձան մայրաքաղաք:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԳՆԵՐԸ

15 մարտի 1908 թ.

Տոկոսաբեր արժէթղթեր

Տոմսակ I փոխ. վիճակախաղի	348 ր. — կ.
Տոմսակ II փոխ. վիճակ.	261 ր. — կ.
Տոմսակ III փոխ. Ազն. Բանկի	235 ր. 50 կ.
4% Պետական Ռենտա	76 ր. 75 կ.
5% փ. թ. Պետ. Ազն. Հ. Բ.	84 ր. 87½ կ.
4½% փ. թ. Պետ. » » »	78 ր. 75 կ.
4% փ. թ. Պետ. » » »	73 ր. — կ.
3½% Գրաւ. թ. Պետ. » »	70 ր. 50 կ.
5% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	85 ր. 50 կ.
4½% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	78 ր. 75 կ.
4% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	72 ր. 75 կ.
5% Ներքին փոխ. 1905 թ. I	96 ր. 75 կ.
5% » » » II	96 ր. 75 կ.
5% Արտաքին փոխ. 1906 թ.	95 ր. 25 կ.

ԲՕՐՍԱ

Լօնդօնի վրա 10 ֆ. ստ. արժէ	95 ր. 78 կ.
Բեռլինի վրա 100 մարկը »	46 ր. 81 կ.
Պարիզի վրա 100 ֆրանկը »	38 ր. 4 կ.
Նաւթ. Թղթ. Նօբել ընկ. »	11,325 ր. — կ.
Կասպիական ընկ. ակցիա »	4150 ր. — կ.
Բագուի ընկ. » »	516 ր. — կ.
Մանթաշեանի » »	160 ր. 50 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բայց կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՉՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:

Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:

Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՈՉ ՋԱՀԵԼ

ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ

Տեղ է որոնում տնտեսուհու, մանուկների դաստիարակչուհու. ծանօթ է խոհանոցի և առևտրական մասի հետ: Հասցէ. Кирочная ул., 28, Лютерная богодѣльня, 9-ից մինչև 11 և երեկոյեան 4—6 ժամը:

(կ. ե.) 2—1

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՉՔԱՒՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԼՈՅՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ իրանից անկախ պատճառներով, ընկերութեան նոր բացված դպրոցի օգտին

տրվելիք ներկայացումը
մարտի 17-ի փոխարէն
տեղի կունենայ
մարտի 26-ին:

1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Յարութիւն Թումանեանի
Ռուս-հայերէն

✦ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԱՌԱՐԱՆ ✦

Գինը՝ 75 կոպ., ճանապարհածախսով 1 ր.
(408 երես. 10,000 բառ)

✧ ԽՕԼԵՐ ✧

Վօդեվիլ մէկ արարուածով
Երկրորդ տպագրութիւն, բարեփոխված
ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская № 25-а
(հ. կ. 10—7

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.

(ա. օ.) 100—14

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

1) Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն: Գինը 8 ր., կազմով 8 ր. 60 կ., 9 ր., 9 ր. 50 կ., 10 ր. և աւել, նայած կազմին: Ճանապարհածախսը (մօտ 1 ր.) հեղինակի վրա:

2) Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն: Բաժանորդագինը 5 ր., առաջին բաժ. գնողների համար 4 ր.: Լոյս են տեսել առաջին երկու պրակները: Բառարանիս մնացած մասը լոյս պիտի տեսնէ մի գրքով.

3) Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն, Բաժանորդագինը 2 ր. 50 կ.:

4) Ռուսերէն այբբենարան եւ առաջին ընթերցարան, գինը 25 կ.:

Դիմել անխտիր. Тифлисъ, архидіакону Амбарцуму Каримянцу (Армянская семинарія) և կամ իրան հեղինակին այս հասցէով. С. Петербургъ, А. Дагбашяну (до востребованія): Երբեք չը դիմել ոչ Սամսոն Յարութիւնեանին (Բագու) և ոչ եղբ. Թառայեանների գրավաճառանոցին (Թիֆլիս): (11, 16) 2—2

Ծախվում է

ՇԱՀԱՒԷՏ ԵՒ ԼԱՒ ԴՐՎԱԾ ԳՈՐԾ
(ՖԻՐՄԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1869 ԹՒԻՑ)
ԻՎԱՆ ԱՍԼ. ԿՈՒԿՈՒՋԱՆՕՎԻ

Թէյի և գալանտերէյնի ապրանքի, գումարով և մաս-մաս վաճառք, Տեօմի բեաղում: Նոյն տեղը ծախվում են բոլոր ապրանքները էժան գներով:
Տեղեկանալ՝ Вельяминовская, 10, երեկոյեան 7—8 ժամը:

(կ. հ. կ.) 3—3

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES“

24-ին մարտի (6-ին ապրիլի ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, առաջնակարգ „Bosphore“ շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն:

Ուղղակի ճաղորդակցութեան տոմսակները՝ մինչեւ Պարիզ, Նիւ-Եօրք եւ Շանխայ (Չինաստանում), Հեռաւոր Արեւելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608: Գրասենեակը բաց է՝ 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան ամենայն օր, բայց կիրակի օրերից:

1—1

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ ԿՕՃԿԵՂԷՆ



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.

Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում:

ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.

Իսկականը այս կլէյմօն ունի իր վրա:

ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ կատարում է

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ	ԽԱՐԿՕՎՈՒՄ	ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ՄՈՍԿՎԱՅՈՒՄ	ՕԴԵՍՍԱՅՈՒՄ	ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ	ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ	ԹԻՖԼԻՍՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ	ԿԱԶԱՆՈՒՄ	ՏԱՇԿԷՆՏՈՒՄ

Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում

„ԼԷՕՊՈԼԴ ՆԷՑՇԵԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ԱՅՍՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան

Արէմ եւ Ազրէտուրա կօշկեղէնի համար

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ. (հ. կ.) 100—11

Типографія „Экономія“ Авака Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская 1. д. Семинаріи № 3.